

որ այդ Յակոբ արեղայդ ինքնին լուաւ ի Գրիգոր վարդապետէն և այժմոյս վարդապետ անուանեալ է։

Որ և Մովսէս կաթողիկոսն գրեալ էր ի թղթի իւրում. «Թէ «տէր վարդապետ, իմոյ զօրութիւն ի ձեռն քում է», և թողթն այժմոյս առ մեզ է։ Ասացեալ ես թէ ընդէր ձեռնադրութիւն առնես ի մերում վիճակի, ուստի հանդերձեալ եմ որոշել և ին։ Ահա սմա պատասխանի. Որպէս հրամայէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. «Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ» (Յովհ. աւ. Ե. 17). զոր և նախնի վեհագոյն կաթողիկոսքն մեր, որ գլուխ վարդապետք էին և կանոնաց հմուտ և ձեռնադրեալքն այսօրիկ են.

Նախ Խաչատուր կաթողիկոսն ձեռնադրեաց զԱկնայ Մկրտիչ եպիսկոպոսն. Տիրատուր, որ կաթողիկոս անուանեցաւ՝ Անկիւրիոյ եպիսկոպոս ձեռնադրեաց զՍարգիս եպիսկոպոսն Կ. Պօլսոյ պատրիարք։ Եւ յետ այնորիկ Ազարիա կաթողիկոսն՝ զՄինաս վարդապետն էզրումայ, զՅակոբն Թօխաթու, զՎասիլ եպիսկոպոսն Ամասիոյ, զԽաչատուր եպիսկոպոսն Մարսիանու, զԽաչատուր եպիսկոպոսն Կաֆայու, զՄկրտիչ վարդապետն Խարբերդու, զմիւս երկայն Մկրտիչն Բաղնշու, զՊօղոս վարդապետն Մշու։ Եւ յետ նորա Յոհաննէս կաթողիկոս զԳալուստ եպիսկոպոսն Մերտինոյ, զՄինաս վարդապետն Երզնկու, զԱլէքսան եպիսկոպոսն Մարսիանու. զԲ. Յակոբն Անկիւրիոյ, զԳրիգոր վարդապետն Կեսարացի ի վերայ Ստամբուլու պատրիարք,

որդեկոյն. դուք եղէք։ Արդ՝ ով եղև ընդդէմ 309. Յակոբ, որ ինքնին 310. որ և այժմ 311. զորս յիւր թղթովն 312. ի ձեռին 313. այժմ 319. որ գլխուս վարդապետ 320. այսօրիկ էին 321. չիք ձեռնադրեաց 323. Անկուրիոյ։

Թղ. 42^ա։ 328. զմիւս Խաչատուր եպիսկոպոս Ռադայու 329. Բաղնշու 330. Յոհաննէս 331. կաթողիկոսն 332. Երզնկայ, զԱլէքսիանոս 333. Մարսուանու. զերկու Յակոբն Անկուրիոյ 333—4 զԳրիգոր Կեսարացի վարդապետն ի վերայ Կոստանդնուպօլսոյ։

535 զՈրոգայթ վարդապետն էտէրնէու, զՂաղար վարդապետն Պուղտանու, զՄեսրոպ վարդապետն Լեհաց, զԹորոսն Կաֆայու, զՂուկաս եպիսկոպոսն Ղօնիայու, զԴաւիթ եպիսկոպոսն Կեսարու այժմ առաջնորդ է:

Եւ յետ նորա Պետրոս կաթուղիկոսն զՍարգիս
540 եպիսկոպոսն, զՄարտիրոս վարդապետն Զնքուշայ, զմիւս Մարտիրոս վարդապետն Մշոյ, զՄաղաբիա վարդապետն Թոխաթու:

Եւ յետ նորա Մինաս վարդապետն և կաթուղիկոսն զՍարգիս եպիսկոպոսն Մերտինոյ, զՂուկաս եպիսկոպոսն Երզնկու,
545 զՄարգար եպիսկոպոսն Թոխաթու, զԴանիէլ եպիսկոպոսն Սուլումանաստրու: Ահա սոքա մեզ յայտնի են, զոր և ականատես եղաք:

Բայց Ազարիա կաթուղիկոսն և Պետրոս կաթուղիկոսն
550 որ վասն Երուսաղէմայ պարտուցն գնացին մինչև ի Հին-Ջուղայ, որքան եպիսկոպոս օրհնեցին, յանուանէ ոչ գիտեմ. ապա և մեք ընդէր ոչ ունիմք իշխանութիւն ձեռնադրելոյ ըստ վերոգրելոցս: Երկրորդ ներսէս Լամբրոնացին, զոր գրեալ է աստիճանաց ճառն, ասէ թէ,
555 «կաթուղիկոսն թարգմանի ընդհանրական, բայց ունի զառաւելութիւն պատուոյ քան զարքեպիսկոպոսն, զի ոչ թէ իւրում վիճակի միայն այլ ընդ ամենայն տեղիս, ուր ազգն իւր համասեռք են, ունի իշխանութիւն

335. զՈրոգայթ (եւ զարագաք գուշակել թէ զինչ անուն է այս» այսպէս ի լուսանցս). Ատրնէու: 336. չիք Պուղտանու: չիք զՄեսրոպ վարդապետն: 338. Կեսարիոյ, որ այժմ: 340. Շէնքուշայ: 342. Թոխադու: 343. չիք. վարդապետն և: 345. Երզնկայ: 346. զՄարգարէ: Թոխադու: 347. Սուլու մանաստրու: 349. բայց զայս Ազարիա: 350. վասն սուրբ Երուս.: 351. զորքան եպիսկոպոսս:

Թդ. 42^բ: 351—2. ոչ գիտեմք: 352. չիք և մեք: 353—4. այո, ունիմք իշխանութիւն ըստ վերոգր. եւ երկրորդ ըստ Ներսէսի Լամբրոնացւոյն զոր և գրեաց յաստիճանաց: չիք ասէ: 355. կաթուղիկոս անուն: ունին: 357. յիւր վիճակն: 358. և համասեռքն: 358. ունին:

ձեռնադրելոյ նոցա եպիսկոպոս և տալ զմիւռոնն, վաւն
 560 որոյ և թարգմանին կաթուղիկոսքն: Դուք, որ զմեզ դա-
 տէք, ընդ էր չէք հետեւեր ասացելոցդ ձերոց. դուք,
 որ զՀալէպցի Մարգար երիցու որդին զՍիմէօնն էր
 օրհնեցիք. ևս առաւել որոյ Երուսաղէմայ հայրա-
 պետն, որ պարծանք է մեզ, բոլոր թեմդ չարժէ զնա
 565 ըստ առաքելոյն (Եբբ. ԺԱ. 38), այլ զի ըստ աւետարանին.
 «Հան նախ զգերանդ յականէ քուսմէ, և ապա հայեա-
 ջիր զչիւղն» (Մատթ. Է. 5) ևլն:

Ասացեալ ես թէ զինչ օգուտ եղև քո օրհներն և
 մեր բանադրելն. իսկ զսոսա բանադրես, թէ Սոյ էք
 570 օրհնեալ, մինչ Սոյ ձեռնադրողքն ամենեքեան բանա-
 դրեալք են, ուրեմն այս վերողրեալքն ամենեքեանքն
 բանադրեալք կու լինին ըստ քո. իսկ թէ այսպէս է,
 վախճանեալքն ի հող, և կենդանիքն ի մէջ աշխարհի
 բանադրէ, որ սիրտդ պաղի, ահա լցաւ աշխարհս նը-
 575 զովիւք, ըստ Ժամանակին Վահանայ և Ստեփանեայ 13)
 կաթուղիկոսաց եղև, որ նմանեցար չորրորդ դազանին,
 որ ուտէր և մանրէր (Դանիէլ Է. 7) ևլն: Զի վեհագոյն
 գտար քան զնախնին քո: Դարձեալ գրեալ ես սուրբ
 Երուսաղէմայ հայրապետին, թէ մեզ դատաստան առ-
 580 նես. մեր մեղքն այն է, որ եպիսկոպոսք եմք օրհներ.

359. ձեռնադրել 360—61. դուք զոր մեզ ասէք, ընդ էր ոչ հետեւիք ասա-
 ցելոցն ձեր 361. չիք դուք: 362. զԲերիացի Մարգար, չիք էր 363. և
 ևս առաւել զԵրուսաղէմայ: 364. զոր բոլոր: 365. ուստի ասեմ ըստ
 աւետարանին: 367. հանել զչիւղն յականէ եղբօր քոյ: 369—74. Արդ՝
 եթէ բանադրես զսոսա՝ եթէ ի Սիս էք օրհնեցեալ, և ի Սիս օրհնե-
 ցեալքն եթէ ընդ բանադրանօք լինին, ուրեմն բազումք և ի ձէնջ (թէ
 ի կենդանեաց և թէ ի մեռելոց) ընդ բանադրանօք գրաւին. որ ի
 Սիս են օրհնեցեալ:

Թղ. 43^ա: Բանադրես ուրեմն զվախճանեալքն ի հող և զկենդանիքն
 ի վերայ երկրի, զի թերևս առ ի նախանձուէ տոյրեալ սիրտ քո պա-
 ղիցի: 374. չիք աշխարհս: 376. չիք կաթուղիկոսաց եղև: և զու
 նմանեցար: 377—8. և գտար կարծեմ վեհագոյն քան: 379. Երուսաղէ-
 մայ պատրիարքին: 379—80. արաւ 380. օրհնեալ:

մեր օրհնելոյն պիտի դատաստան, ապա ձեր արարեալ
բանից դատաստան չպիտի:
Վասն Համազասպ եպիսկոպոսին, Ռափիսի զանա-
զան տանջանօք սպանել տուիք. և Ճանճի եպիսկո-
պոսն Մարգակերաց, որոյ ականջն հատանել տուիք, և
585 զՍերկէլեցի արեղային զծածուկ անդամն կտրել տուիք,
և զԳառնեցի արեղային հաւատոցն ուրացուցիք, զՉա-
քէոս արեղային ֆռանկ առնել տուիք, նոյնպէս զՍահակ
կաթուղիկոսն և զՊողոս վարդապետն տաճկցնել տուիք
590 և ազգի ազգի տանջանօք հաւատոցն ուրացուցիք 15), և
ի Լեհու երկիրն անհաղորդ, անմասն, անթաղում ելան
այնքան քրիստոնեայք, դեռ ևս այնպէս կան ելն:
Այս բանիցս դատաստան չիկայ միայն մեզ կայ:
Դարձեալ գրեալ ես թէ յաղթահարեցաւ սիմո-
595 նական ախտիւ 16) ըստ անուանակոչութեան իւրոյ: Արդ-
եա ի նոցանէ կաշառս առի, զայն թող Աստուած քննէ
և դատէ. իսկ եթէ զմեզ իզուր զրպարտես, Տէր ա-
րասցէ բնդ մեզ և ընդ ձեզ դատաստան: Քո արեղային
յորժամ հրաւիրակ եկին ի Կ. Պօլիս և մեր անդ էաք,
400 զոր փոքրիկ աւետարան մի առին հարիւր զուրուշի,
զդինն ստամբուցոց վճարել տուին, թէ մեզ խըզմէտ և
վարձ է: Նոյնպէս և մեր զԱնտոն երէցն առաքեցաք
ի Հալէպ հրաւիրակ, ապա ընդէր ստակ մի ոչ պահան-
ջեաց ի նոցանէ: Ահա, ո՞վ եղև սիմոնական:

381 —2. արդ՝ մեր օրհնելոյն դատաստան պիտոյ է, և ձեր
անդատաստան բանից դատաստան չէ պիտոյ: 383. որ զանա-
զան: 384. սպանանել: Ճանճի (Շանուհ անժանօթ). այնպէս ի
լուսանցսն: 385. մարգակերաց երկրին, ականջահատ անել տուիք:
387. ի հաւատոց: 388. դիտահալ: 389. Պողոս, տաճկացուն:
390. ազգի ազգի չարչարանօք ի: 391—2. զԼեհու երկրի զայնքան
քրիստոնեայն անհաղորդ, անմաս և անթաղում թողիք և դեռ: 392. չիք
ելն: 393 Այսպիսի բանից: չկայ, այլ մեզ միայն կայ:
Թ. 43^թ: 395. ախտիւն իւրում: 396. եթէ ես: Աստուած թող:
398—9. Յորժամ եկին քո արեղային հրաւիրակ ի Կոստանդնուպօլիս:
400. ո՞. զ2. և 401. ստամբուցոց: 403. չիք ապա: 404. Արդ՝ ո՞վ եղև
սիմոնական. ո՞ղէ, տաճի ինձ:

405 Գրեալ ես անուանակցին քում, մեր անունն Սի-
մօն չէ, այլ Սիմէօն. եթէ լիցի Սիմօն, զինչ Քրիստոս է
անուանակից լինելն. ահա, առաքելոյն Պետրոսի անուան
Տէրն. «Սիմօն որդի Յօնանու» (Յովհ. ա. Ա. 42). ահա և
դու անուանակից ես Փիլիպպոսի առաքելոյն. անուանա-
410 կից լինելն զինչ չա՛հ է առանց գործոց, ըստ հօրն Անտո-
նի. վա՛յ այնոցիկ, որոց անունն մեծ է քան զգործն:

Գարձեալ գրեալ ես ըստ կանոնաց, թէ. եպիսկո-
պոս կամ այլ որ միմեանց վիճակի մի իշխեսցէ: Այո,
այդպէս: Ապա դա եպիսկոպոսաց է, իսկ կաթողիկո-
415 սաց համարձակութիւնս տայ սուրբն Ներսէս Լամբրո-
սնացին ըստ վերոգրելոց: Բայց վասն Թորոսին, որ ա-
ռացեալ ես, մեք այն ժամանակին՝ որ ընդ Գրիգոր վար-
դապետին ի Ստամբուլ կու գնայաք, հանդիպեցաք յԱն-
կիւրիա, վախճանեցաւ Ղուկաս եպիսկոպոսն. միաբան
420 ժողովուրդն աղաչեցին զվարդապետն և զմեզ թէ զԹո-
րոսն արարէք առաջնորդ, զի սա կարող է կառավա-
րել զվանքն և զայսչափ պարտքն. յետ այնորիկ, զինչ
և իցէ, վարդապետն վանից հայր եղ զսա. մեք դնա-
ցաք ի Կ. Պօլիս. ի դառնալն մեր կրկին հանդիպեցաք
425 անդ. միաբան քահանայք և ժողովուրդք եկին առ մեզ.
զաղաչանս, զպաղատանս զաղերս առնելով խնդրեցին
թէ եպիսկոպոս ձեռնադրէ. ոչ թէ միայն իւրեանք,

405. Ի՞նչ ըստ անուանակցոյն իւրեւմէ 406. այլ Սիմէօն է. և
եթէ լինէր: Վնաս էր: 407. ևս տուցր 408. Տէրն մեր: Եւ
ահա դու. 409—410. առաքելոյն Փիլիպպոսի: Արդ՝ ինչ չա՛հ է
քեզ անուանակից լինելն առանց: 412. գրեալ ես թէ, ի կանոնաց
գրեալ է. եպիսկոպոս: 413. վիճակն մի իշխեսցեն: 414. այդպէս է:
Թող, 44^{րդ}: 414. սակայն այդ կանոն եպիսկոպոսաց վասն է:
415—16. Լամբրոսնացի ըստ վերոգրեցիկոյն: 417. չիք սր: 418. Ստամբուլ
չիք կու: 418—9. ի քաղաքն Անկուրիա և անդ վախճան եղև եպօին.
419—20. և միաձայն ժողովուրդն աղաղակեցին առ վարդապետն և առ
մեզ: 422. զվանքն մեր: 422—23. չիք զինչ և իցէ: 423 հայր վանից և
մեք: 424. դնացաք Ստամբուլ: Եւ ի: 425—6. անդ վերստին քահա-
նայք և ժողովուրդ եկին միաբան առ մեզ, աղաչանս, պաղատանս առնե-
լով: 427. ի մէջ, թէ եպիսկոպոս ձեռնադրես զսա ինքեանք միայն:

այլ և այլազգիքն, որ պարտատէր էին, նոքա ևս եկեալ
 աղաչեցին, և երբեմն ահ և երկիւղ տալով նեղացու-
 450 ցանէին զմեզ: Մեք զայս ևս ասացաք՝ թէ էջմիածնի
 թեմն է Էնկիւրի քաղաքն, և վարդապետն այլ լինի
 թէ նեղանայ, իսկ քահանայքն և ժողովուրդքն ամե-
 նեքեան ասացին, մեք գիտեմք և էջմիածին, մեք գիտեմք
 և վարդապետն. նոցա խօսքն ի վերայ մերս Մեք ևս
 455 վասն այսպէս ասելոյն ձեռնադրեցաք զինքն եպիսկո-
 պոս: Եթէ ուղիղ դատաստան ունիա, Էնկիւրիացի
 քահանայքն և ժողովուրդքն են բանադրելոյ արժանի,
 իւրեանք իսկ յանձն առին զպատասխան տալն: Յետ
 այնորիկ Գրիգոր վարդապետն նեղացեր է իւրեանց,
 440 թէ առանց հրամանի բան արարիք. ես էջմիածնի վե-
 քիլ և երէցփոխան եմ: Յետ քանի ամսոյ Շահին
 չէլէպին և խօճայ Երեմիայն կու հանդիպին ի յԱնկիւ-
 րիա. կառնեն զԹորոսն և կու տանեն առ վարդապետն
 և անդէն կու հաշտեցնեն. զինչ և իցէ, աթոռին հախն
 445 և էջմիածնի բաժինն կառնէ ի Թորոսէն, յետ հաշ-
 տութեան և օրհնելոյն զինքն՝ նուիրակ է արեր իւրեան
 և վէքիլ, և տուեր է Գրիգոր վարդապետն ի ձեռն Թո-
 րոսին նամակ և իշխանութեան թուխտ և առաքեր է

428. այլազգիք ևս որ պարտատեարք էին, չիք նոքա ևս եկեալ:
 429—30. տալով ձանձրացուցին. բայց այնու ամիսնայնիւ ոչ առի
 յանձն, այլ ասացի թէ էջմ: 431. է թեմս: չիք Էնկիւրի քաղաքն:
 չիք այլ: 432—4. չիք իսկ: Քահանայք և իշխանք և ժողովուրդքն
 միաբերան: 433—4. ասացին թէ մեք գրեզ գիտեմք և էջմիածին
 գիտեմք, և վարդապետին խօսքն ի վերայ մեր:

Թ. 44^թ: 434—5. Յետ այսպիսի բանից նոցա ձեռնադրեցաք և
 մեք զնա եպիսկոպոս: 436—9. Արդ՝ եթէ ուղղադատ ոք էիր, զԱնկիւ-
 րիայ: բանադրէիր ըստ արժանւոյն, որք յանձն առին զպա-
 տասխանատուութիւնն, որոց և Գրիգոր: չիք իւրեանց: 440.
 իմոյ հրամանի: 441. և երեսփոխան եմ: քանի մի ամսոյ: 442.
 չիք ի: յԱնկուրիայ: 443. և առեալ և տանին: 444. չիք և անդէն
 կու: հաշտեցուցանեն: չիք զինչ և իցէ աթոռին: հախս: 445—9.
 և բաժին առնեն ի նմանէ էջմիածնի. և ապա նուիրակ և վէքիլ ա-
 րարեալ է իւր. ևս և թուղթ իշխանութեան ի ձեռս նորա տուեալ և

ի կողմանս Ուռումելու և Անատոլու, որ տարի և կէս,
 450 այլ աւելի և ոչ պակաս, յետոյ բերեր է առ ինքն.
 այս բանիս գիտակ են նուիրակն քո՝ Մինաս վարդապետն
 և այլք, որք հանդիպեալք են միմեանց, և ապա
 յետ այնորիկ օրհնութեան նամակաւ ուղարկեալ է
 յԱնկիւրիս առաջնորդ, թէ ես էջմիածնի վէքիլ եմ,
 455 այսուհետև չունի որ իշխանութիւն այլ և այլ ասել
 դամ, թէ ժողովուրդ և թէ իշխան. յայնժամ գայ
 յԱնկիւրիս, իսկ յորժամ կուգայ՝ տեսանէ զժողո-
 վուրդն այլ և այլ:

Եւ ևս մեք ևս թուխտ յղեցաք իւրեան, թէ որք
 460 աղաչանօք օրհնել տուին զքեզ և ուխտ արարին թէ
 վարդապետին և թէ էջմիածնի խօսքն ի վերայ մեր,
 և այժմ՝ զքեզ այդպէս արարին, ել և եկ առ մեզ և
 ի մեր թեմն. իմ երկիրն առաջի քս է. և սա եկն առ
 մեզ և մնաց աստ ի սուրբ աթոռս: Այլ քեզ ինչ
 465 իլախայ մնաց, որ թուխտ ուղարկես և բանադրես ըզ-
 մեզ թէ եպիսկոպոս է օրհնելու: Թէ օրհնեմք ամօթ է:
 Զի ահա այս իմ թեմն է, հայրենիք իւր ի Գամրան
 երկրին է, այսինքն ի չափոյ. և մայրազինքն ի Մելի-
 տենոյ: Ահա եղև, որ հարբ և մարբ իւրով ի թեմէս
 470 և ի վիճակէս մերմէ. քեզ զինչ փոյթ, որ մեղադրանք և

առաքեալ ի կողմանս: 450 և աւելի ևս նուիրակ լեալ և առ ինքն բե-
 րեալ 451. որպէս այժմ բանիս գիտակ է: 552. չիք և այլք: զոր
 հանդիպեալ է: չիք միմեանց և ապա: 453—54. յղեալ է յԱնկու-
 րիայ: 456. չիք թէ ժողովուրդ և թէ իշխան: 456—58. և յորժամ
 գայ յԱնկիւրիս, տեսանէ այլ և այլ զվարդապետն:

Թդ. 45^ա: 459. Յետ որոյ և մեք ևս թուղթս առաքեցաք նմա,
 թէ զքեզ: 460—1. ետուն, զվարդապետին և զէջմիածնի խօսքն ի վերայ
 իւրեանց առ ինչ: 462. մինչ այսպէս արարին քեզ: 463. և ի թեմս մեր,
 զի առաջի քո է վիճակն մեր յորն և հաճիս Ուստի եկն նա: 444. չիք
 աստ աթոռս մեր: Արդ՝ այսուհետև: 465. յոխայ մնաց քեզ, որ թուղթ
 յղես մեզ վասն նորա, և մեղադրես զմեզ թէ: 466—70. ես օրհնելու Զի թէ
 օրհնեմ, զինչ չլեաս ի նմանէ. ոչ ապաքէն ի մեր թեմէն է, զի ի հօր
 կողմանէ ի Գամրաց երկրէն է և ի մօր կողմանէ՝ ի Մելիտենոյ, զի հարբ
 և մարբ ի թեմէս և ի վիճակէս մերմէ է: 470—71. զի փոյթ, որ

Թուղտ ուղարկես յայս երկիրս, զի հրամայէ Քրիստոս
 ի սուրբ աւետարանին. «օրհնեցէք և մի անիծանէք»
 (Հռոմ. ԺԲ. 14): Մէք զՔրիստոսի հրամանն կատարեցաք
 և օրհնեցաք և դուք հակառակն գործեցիք, մանաւանդ
 473 որ անպատեհ, յանդուգն և ամբարտաւան խօսք կու
 գրես ի տոմսիդ. քո: Ըստ Սենեքերիմայ արքային Ասորե-
 ստանեայց որ առաքեաց զՌափսակ ի Լաբիսայ առ
 արքայն Եզեկիա և ասէ. «Այսպէս ասէ, ասացէք ցե-
 ղեկիա, արքայն Ասորեստանեայց, զի՛նչ իցէ յոյսն, յոր
 480 դու յուսացեալ ես. և արդ, յո՛ յուսացեալ նշանակե-
 ցեր զիս. ահա յուսացեալ իցես ի ցուպն եղեգնեայ,
 ջախջախեալ յԵգիպտոս, յոր թէ՛ յենուցու այր՝ ման-
 րիցէ ի ձեռս նորա և խոցիցէ զնա (Եսայի ԼԶ. 8) և լին: Զայս
 իբր զմեզ ես նմանեցուցեալ. այո՛, և ոչ բնաւին, թէպէտ
 485 Ռափսակ խորխտանալով եկն ի վերայ Եզեկիայ ար-
 քայի, ասելով զհպարտութեան բանս, թէ «Ո՛ւր է աս-
 տուածն եմաթայ և Արփաթայ և ո՛ւր է աստուածն
 Սեփարուիմայ քաղաքին Անա և Աւա, միթէ փրկեցին
 զՍամարիա ի ձեռաց իմոց, նոյնպէս զիմարդ փրկեսցէ
 490 Տէր Աստուածն ձեր զԵրուսաղէմ՝ ի ձեռաց իմոց» (Դ.
 Թագ. ԺԸ. 34—35):

Եւ եղև, իբրև լուաւ Եզեկիա արքայ, պատառեաց
 Թուղթ և մեղադրանք յղես ի կողմանս յայտ Արդ հրամայէ: 472.
 չիք ի սուրբ օրհնեցէք զանիծիչս ձեր, և առաքեալն ասէ: 473—6.
 կատարեցաք՝ յօրհնելն մեր զնա և դու զհակառակն նորին գործե-
 ցեր յանիծելն քո. և ոչ այսչափ միայն, այլ և անպատեհ անդուք և
 անբարտաւախօսք գրել ժպրհիս ի քարալիզի քում: 477. ի Լաբի-
 սայէ: 478. Եզեկիա, ասել թէ: չիք ասացէք ցեղեկիա: 479—480.
 Ասորեստանեայց. թէ յո՛ յուսացեալ

Թագ. 45: իցես: Ըստ սմա և դու ասես. յո՛ յուսաց: 481. Թերևս յու-
 սաց: 482—4. ի ջախջախ եգիպտացին, յոր թէ ոք յենուցու՝ ընդ
 ձեռն ելանէ: Այսմ ասացելոյդ իբր թէ զմեզ նմանեցուցեալ ես. որ
 անդէպ է բնաւին. զի թէպէտ: 485. Ռափսակ հպարտանալով եկն
 առ Եզեկի: 486. բանս ըստ քեզ: 488. քաղաքին Սեփարուիմ:
 489 — 91. չիք նոյնպէս զիարդ . . . ի ձեռաց իմոց: 492 — 6.
 իբրև զայս այսպէս լուաւ Եզեկիա, պատառեաց զհանդերձս իւր
 և եկաց յաղօթս ի տան Տեառն: Լուաւ ամենալուր սենին Աստու-

զհանդերձս իւր, և ել ի տուն Տեառն Աստուծոյ և
 ասէ. «Տէր Աստուած Իսրայէլի, որ նստիս ի քրովքէս»
 495 ևլին: Եւ հասանել զիշերոյն էջ հրեշտակ Տեառն և եհար ի
 բանակէ նոցա ՃԶԵՌ» (Դ. Թագ. ԺԺ) ևլին: Դիտացիր թէ
 յապագս ոյր է պատճառն. ըստ այնմ սարասի և դու իբրև
 զՌաֆայիակ հպարտացեալ ես ամբարտաւանութեամբ ի
 վերայ մեր ասելով ի քարտիզիդ. «ահա զԱղուան,
 500 զԱղթամար, զԿ. Պօլիս, զԵրուսաղէմ հնազանդեցուցեալ
 եմ, և դու ո՛ր ես, որ ոչ հնազանդիս. յո՛ր յուսացեալ ես,
 որ մեզ չես հնազանդեր: Տես թէ նա ի գիշերին յայն-
 միկ զի՛նչ կրեաց ի հրեշտակէն: չերկնչիս յԱստուծոյ.
 լինի թէ այդպիսի մեծաբանութեամբդ նմին նման լինի-
 505 ցիս: Լուր և ունկնդիր խրատուն Գամաղիէլի օրէնս ուսուց-
 չին, որ առ հրէայսն վասն առաքելոցն, «եթէ ի մարդկանէ
 կործանելոց են, որպէս Թեդաս և Յուդաս. եթէ յԱստու-
 ծոյ է, ասէ, գուցէ աստուածամարտ գտանիցիր» (Դործք
 առաք. Ե. 33—40): Նոյն և դու զգոյշ լեր և զահմէթ մի
 510 քաշեր. չբաւականացար, չկշտացար ի հակառակութենէ,
 որպէս որ հաւաստեաւ տեսեր եմք զարարեալ խռո-
 վութիւնն ի Բաղէշ առ Ե. վարդապետօքն, որ ազգի
 ազգի նեղութիւն հասուցեր ժողովրդեանն այնմիկ, հա-
 զիւ մազապուրծ դերժար և փախեար ի նոցանէ և ան-
 515 կար ի Վան: Եւ անդ ևս բաղում խռովութիւնս արա-
 րեր ընդ Մսկացի Յովսէփ վարդապետին և անտի ևս

ծոյ և առաքեաց հրեշտակս ի բանակն հպարտին Սենեքերիմոյ, և
 եհար ի բանակէ նոցա ՃԶԵՌ և դայն որում գիտակ էք, թէ: 498.
 չիք ես: 501—3. չիք ո՛ր ես յո՛ր յուսացեալ ես, որ ոչ հնազանդիս մեզ:
 Արդ՝ յառեմ զակն բո և տես թէ նա զի՛նչ կրեաց ի

Թագ. 46^ա: զիշերին յայնմիկ ի հրեշտակէ անտի: Չերկնչիս արդեօք
 դու: 504. չիք լինի թէ այդպիսի գուցէ մեծաբանութեամբդ այդուիկ:
 505. Լուր թերեւ և ունկն դիր դու: 507. է (ասէ), կործանեցին: զԹե-
 դաս և զՅուդայ, իսկ: 508. իցէ, գուցէ: գտանիջիր: 509—10. զգոյշ
 լեր և յընդունայն մի աշխատիր. չբաւակ. 511. չիք որ: հաւաստեաւ
 լեմք զարարեալ աղմուկդ և խռովութիւնդ: 512. վարդապետուն:
 513. ժողովրդեան, որ ի նմա, որ:

փախստական ի Լիմ դնացեր, և անտի յԱրճէշ և ի նոյնն
 ևս անչափ կռիւ ընդ տեղացի եպիսկոպոսացն նոցա,
 որ և ըմբռնել կամեցան տալ զքեզ, և անտի ևս փա-
 520 խեալ հաղիւ զերծար, թողում, որ ընդ Մինաս վար-
 դապետին ի յէրզէրում: Զինչ եղև քեզ, այս ինչ աղ-
 մուկ և խռովութիւն է. երկնչիր յԱստուծոյ, զինչ շահ
 և օգուտ է քեզ այսչափ աղմկաց և խռովութեանց,
 զայսչափ ասացեալ երկիրս, որ աղմկով և խռովու-
 525 թեամբ լցեալ ես չկշտացար, մեր երկիրն մնաց: Ապա
 մեր երկիրն կարող չես ինչ առնել, հալովդ կացիր, զի
 այս երկիրս օսմանցւոյ երկիրն է, սոցա դատաստանն
 ուղիղ է. Աստուած զսոցա թաղաւորութիւնն հաստատ
 պահեսցէ և զսովթան Մուրատին մէկ օրն Ռարացէ,
 530 զիւրն թաղաւորութիւն օրհնեսցէ մեծամեծօք, իշխանօք
 և զօրօք իւրովք: Ըստ առաքելոյն «մանաւանդ աղօթս
 արարէք ի վերայ թաղաւորաց» (Ա. Տիմ. Բ. 2) և ինչ Ապա
 չէ, և դու այժմ նոր Փելիքուէս և Փելիքս յայտնեցար,
 պիտի որ աշխարհս կրկին լուսաւորես. եթէ դու, եթէ
 535 մեր՝ որ նոր կաթողիկոս անուանեցաք և յաթոռ հայրա-
 պետութեան նստաք: Աշխարհս խռովութեամբ և հար-
 կապահանջութեամբ լցաւ, մանաւանդ որ երկու թա-
 գաւորք ի վերայ միմեանց պատերազմ կան և ևս ժո-

518 չիք նոցա: 519—26. Ըմբռնել տալ կամեցեալ են քեզ, յորոց
 ևս ձեռաց փախուցեալ հաղիւ հազ զերծար: Թողում զկազն որ ընդ
 Կարնոյ Մինաս վարդապետին արարեր երկարապէս: Արդ զինչ եղև
 քեզ, և էր վասն այսքան աղմուկը և խռովութիւնը

Թղ. 46^բ: Ի քէն յառաջ գան. եթէ չերկնչիս յԱստուծոյ, պատ-
 կառեալ թերեւ ի մարդկանէ, զինչ շահ և օգուտ եղև քեզ յայսցանէ,
 և յիս այսչափ աղմկաձգութեանց և խռովութեանց ընդ ամենայն
 տեղիս, չկշտացար այնու ամենայնիւ, այլ կամիս և յաշխարհս մեր
 ձգել զնոյն աղմուկ և խռովութիւն, սակայն երկրի մերում չես կա-
 րող առնել ինչ. հալովդ կաց: 530. չիք իշխանօք: 532—5. Թաղա-
 ւորաց: Թուի ինձ, զի դու այժմ նոր Փելիքս և Փելիքդէս յայտնե-
 ցար, զոր հանդերձեալ ես կրկին զաշխարհս լուսաւորել, զի եթէ
 դուք և եթէ մեք, նոր կաթողիկոս յայտնեցաք: 536. նստաք, վասն
 այն և աշխ: 538—42. կան և դասք ժողովրդականաց ի ներքոյ հարկի

ղովուրդքն զցայգ և զցերեկ անդադար ի նւշքոյ հարկի
 340 կան, զինչ առնելն իւրեանց ոչ գիտեն, դեռ հանգիստ
 չես կենար ի տեղդ. աւելի պակաս թղտեր ևս կու գը-
 րես և կու յղես այս երկիրս: Երևան շինեցեր կա-
 ռավարեցեր այս երկիրս մնաց, կամ թէ քեզի պէս
 կաթուղիկոս չէր եղեր, դու միայն խելօք, ճարտար և
 345 իմաստուն յայտնեցար որ այդ կողմդ ի հաշտ չես կենար:

Ապա զինչ զարմանամբ զքո գրելդ, ահա քո վար-
 դապետն Մովսէս կաթուղիկոսն մինչև ի Հռոմ վա-
 փին հնազանդութեան թուղթ է առաքեր և բազում
 երանութեամբ երաներ է, որ նոցա աղօթքն ձեզ օգ-
 350 նական լիցի, որոյ տեսեալ Յովհաննէս վարդապետն
 պատրիարք Կ. Պօլսոյ ի Հռոմ զթուղտն և գրեալ զօ-
 րինակն ի Ստամբուլ էր յղեալ, որ ես անդ հանդիպե-
 ցայ, և զօրինակն առի, ահա այժմուս մօտ ինձ կայ:
 Այսքան ժամանակ է եղեալ կաթուղիկոսքն ձեռնա-
 355 գրեր են մինչև ցայժմ և ոչ են խտրեր, նոյնպէս և
 մեք կու ձեռնադրեմք և ոչ խտրեմք, ըստ այնմ. «զե-
 կեալն առ իս ոչ հանից արտաքս» (Յովհ. աւ. 1, 2, 37):
 Զի յայնմ ոչ ձեր կաթուղիկոսքն թուխտ են առաքեր

անդադար հեծեն և զելս իրացն գտանել ոչ գիտեն: Բայց դու այ-
 սու ամենայնիւ տակաւին հանգիստ ոչ առնուս ի տեղդ. աւելի և
 պակաս թուղթ գրիչ և յղիլ ձեռնամխիս ի կողմանս յայտ Զերևան:

Թղ. 47^ա: 543—4. այս կողմանքս մնացին. կամ թէ քեզ նման
 կաթուղիկոս չէր եկեալ յառաջագոյն: 545—51. հանճարեղ յայտնե-
 ցար ի կողմանդ որ ի հաղդ չես կենար: Յիշեմ և զվարդապետին քո
 զբարեմտութիւն, որոյ շառուիղէ և դու ի վեր ընծայեցար. դՄովսէս
 կաթուղիկոսն ասեմ, որ մինչև ի Հռոմայ պապն զթուղթ հնազան-
 դութեան առաքեաց և բազում երանութեամբ երանեալ է զնս, զոր
 նոցա աղօթքն ձեզ օգնական լիցի: Եւ զայն տեսեալ Յովհաննէս վար-
 դապետին պատրիարքին Աստանդնուպօլսի ի Հռոմ զթուղթն: 552.
 առաքեալ էր ի Ստամբուլ, որ և ետ 553—56. յայնժամ և առի
 զօրինակն, զոր այժմ առ իս կայ: Եւ արդ՝ առ քեզ դարձամ ըս-
 նիւք. զի յայսքան ամաց հետէ եղեալ կաթուղիկոսքն ձեռնադրեն
 մինչև ցայսօր և խտրութիւն ինչ ոչ են արարեալ. նմանապէս և մեք
 ձեռնադրեմք զարժանաւորսն և ոչ խտրեմք ինչ: 558—61. Ասան
 զի ոչ ձեր կաթուղիկոսքն թուղթ են առաքեալ սոցա սակս այս-

սոցաւ և սորա ձեզ, այլ սիրով են կացեալ և ի միմեանց
 560 ձեռնադրեալքն ընդունելու են:

Ձեռն ամաչեր և վախեր՝ թէ վնաս մի կու լինի,
 սորա օտմանցի են. թէպէտ այլազգի են, բայց ուղիղ
 դատաստան ունին: Եւ դարձեալ գրեալ են ի թղաթի,
 թէ զայս թուղթս իմ՝ ձեռամբ գրեցի, իբր թէ հաթ-
 565 թի չէրիք է, վասն որոյ զպատիւ անուանն Աստուծոյ յա-
 վշտակեալ են, որ ոչ կամի զվառան այլոց տալ, ըստ մար-
 դարէին (Յսայի ԽԲ. 8), այլ և կամար գմբէթ են ձեռացու-
 ցեալ ի վերայ անուանդ և խաչ ի դուռն (16). այդ է քո
 իմաստութիւնդ, որ պատուոյն Աստուծոյ վայելէ, դու քո
 570 անունն ի վերայ են եղեալ: Այդ բանիւդ կու մեծա-
 բանես ի վերայ մեր, թուղտ կուղարկես, այս երկիրս
 գիտես թէ Լեհաց երկիր է, որ թուղտ ուղարկելով,
 այլ և այլ խօսք ասելով նոցա և նիկօլ եպիսկոպոսին,
 խոռովեցուցիր և վրդովեցուցիր զայն քաղաքն, որ զմիա-
 575 բան Լուսաւորչի ազգն և զեպիսկոպոսն իւրեանց ֆռանկ
 առնել տուիք. մանաւանդ Էջմիածնի զվազուց հետէ
 կարգեալ գերեզմանատունն, որ սրբոց հայրապետաց,
 վարդապետաց և օծեալ թաղաւորաց և իշխանաց, ար-
 դարոց և մարտիրոսաց և սրբոց բազմաց նշխարս կա-
 580 յին անդ, զոր փորեալ զգետն ի վերայ կապեցիր, որ

ալիսի իրաց, և ոչ մերքն ձեզ, այլ սիրով են կացեալք եղբայրաբար
 և առ ի միմեանց զձեռնադրեալսն ընդունելու են: Իսկ դու չամաչես
 և չզանգիտես թէ վնաս ինչ յառաջանայ ի հակառակութենէ աստի
 562. սակայն ուղիղ:

Թղ. 47^բ: 563. ի թղթով քումս 564—5. գրեցի. որով կամիս
 ցուցանել թէ՝ իբր հէթթի չէրիք իմն է և զպատիւս 566. ապ զփառս
 իւր այլոց: 567. չիք այլ և զի կամարս 568 — 73. արդեօք այդ է
 քո իմաստութիւնդ, զպատիւն, որ միոյն Աստուծոյ վայելէ, դու ի
 վերայ անուանդ եղեալ են որով մեծաբանես ի վերայ մեր, կարծե-
 լով քեզ թէ Լեհաց երկիրն է այս, որ թուղթ առաքելով և այլեայլ
 խօսս և զրոյցս ասելով: 574. զքաղաքն զայն: 576—8. տուիք: Եւ
 ոչ այսպիսի միայն, այլ և Էջմիածնի զվազուց հետէ զկարգեալ տունն,
 որ ի սրբոց վարդապետաց և հայրապետաց և օծեալ թաղաւորաց և
 իշխանաց: 579. նշխարք եղեալ կա: 580—1. կապեցիր. զնշխար և

նշխարք սրբոցն էին զեռաստար արարիք 17). և ուր եղիք
«զանշարժ եղիցին», որ համարս տալոց էք առաջի Աս-
տուծոյ:

Դարձեալ զՄեղքիսէթ կաթուղիկոսի օրհնեալ մե-
585 ռոնն ի Մշոյ դաշտն արհամարեալ թափեցիք, և առ ի
դուրս արարիք. որ այն մեռնաւն Մեղիքսէթ կաթու-
ղիկոսն զՄովսէսն եպիսկոպոս ձեռնադրեաց, և այն թէ
մեռն էր, զիմրդ յանդգնաբար արհամարհեցիք, և
թէ մեռն չէր, զիմրդ եղև Մովսէս եպիսկոպոս, և
590 թէ եպիսկոպոս չէր, իրաւէս եղև կաթուղիկոս, և թէ
կաթուղիկոս չէր, զիմրդ դքեզ յաստիճան եպիսկո-
պոսութեան հրաւիրեաց, և թէ դու կաթուղիկոս չես,
զիմրդ համարձակիս եպիսկոպոս ձեռնադրել:

Դարձեալ ձեր իմաստութիւն այսչափ է. որ նուի-
595 ղակքն ձեր ազուհացից պահոցն ի Պրուսայ, Մանիսա-
յու, Իզմիրու երկիրն վասն զանկի զունկի և տընկ-
տընկոցի համար զպատարագն յայտնի կու առնեն. որ
ամենեւին փակեալ են ի սրբոց հայրապետաց, այլ և այլ
պատճառս դնելով. ոչ այնպէս, այլ վասն փառասի-
600 րութեան և ազահութեան: Եւ ևս, որ յաչս մարդ-
կան կեղծաւոր պահեցող երեւելով ահացուցանէք զքրիս-
տոնեայս, պատճառ վասն արծաթոյ, թէ աւելի առ-
նիցեն քան զտուեալն իւրեանց, որպէս որ յայտնի
ի մէջ ամբօխին ասէին նուիրակք քո, թէ այսչափ դը-
605 րամ կուտայք նա՛ ձեզ մեռն կուտամք, և թէ ոչ,


զոսկերս սրբոցն որք էին անդ՝ գետաւ 582. որում համարս: 584. և
դարձեալ կաթուղիկոսին: 585. ի Մշու: 585—86. առաթուրս: 586.
որ միայն այնու մեռն Մեղքիսէթ:

Թղ. 48^ա: 587. և թէ այն, 589. եթէ մեռն: 590. եթէ եպիս-
և եթէ, 591. զիմրդ զձեզ, 592. և եթէ, 595—6. նուիրակն, պահուցն
ի Պրուսայ, Մանիսու: 596. զանչիղունչի և զնկտկոցի: 597. յայտնի
առնել ևս: 598—9. ըստ ամենայնի փակեալ է ի կանոնաց սրբոց
հայրապետաց. թէոյէտ այլ և այլ պատճառս յօդեն, սակայն ոչ է
այնպէս: 600. որ առ աչս: 601. կեղծաւորաբար: 602—3. որոյ պատ-
ճառն վասն արծաթոյ, զի գէթ աւելի առնուցուք քան զտուեալսն

դուք գիտէք: Որպէս որ Մարտիրոս եպիսկոպոսն և Մինաս վարդապետն քո ի Պրուսայ եճ՝ զուռուշ են ուղեր. թէ որչափ աղմուկ է եղեր ի մէջ նոցա, և այլ բազում տեղիս, որքան անպատեհ և անդատաստան 610 բանք արարեալ են, մի ըստ միովէ գրել մեզ ձանձրու թիւն է, որ չես ամաչեր սիմոնական զմեզ կոչելով: Իմ Սիմոնական լինելն թէ չլինելն յայտնի է ի մէջ քրիստոնէից, մանաւանդ ի մէջ Հալպայ, որ այնքան տարի առաջնորդ կացի ի մէջ իւրեանց, նոքա գիտեն զիս 615 թէ փառասէր եմ կամ ագահ, կամ յափշտակող, կամ արծաթասէր կամ կաշառառու. զինչ և իցէ, սոցա յայտնի եմք. հարցըիր սոցա: Բայց դուք, որ զՀուռմոց տունն աւերեցիք վասն ագահութեան, զոր և եթէ գրեմք, երկարումն լինի բանիս: Բայց հուսկ յետոյ 620 գիտութիւն լիցի քեզ, որ գրեալ էիր, թէ այժմ պատիւ արարէք: Քրիստոս Աստուած մեր հրամայէ ի սուրբ աւետարանին թէ «մի դատէք, զի մի դատիցիք» (Մատթ. է. 1). «մի պատժէք, զի մի պատժիցիք» (Լուկ. 2. 37). որով դատաստանաւ դատէք, դատելոց էք. նոյնպէս 625 և դու. պատուես՝ պատուիս, եթէ փառաւորես՝ փառաւորիս, եթէ պատժես՝ պատժիս և այլն ըստ կարգի, այսքան առ այս:

Ի նոցանէ, որպէս յայտնապէս 607. ի Պուրսայ 608 — 11. որոյ պատճառաւ թէ որչափ աղմուկ է եղեր՝ թողումք ի գրել, և զայլ բազում տեղիս արարեալ զանպատեհ և զանդատաստան բանս ձեր մի ըստ միովէ գրել ինձ ձանձրութիւն համարիմ: Ո՛չ պատկառիս

Թղ. 48^բ: բնաւ և ոչ ամաչես երբէք սիմոնա 612. չիք թէ 613. բնակչաց Հալպայ 614. ի մէջ նոցա 615. զիս լաւապէս թէ փառա 616. և կամ զինչ և իցէ, նոցա 617. յայտնի է, հարց առ նոսա 618. չիք և: 621. արարաք: չիք մեր 622. չիք թէ 624. զի որով 625. եթէ պատուես 625—26. չիք եթէ փառաւորես փառաւորիս 627. կարգին: առ այս բաւ է:



13. Վահան կամ Վահանիկ Բաղաս Զուանչլիւ իշխանի որդին էր. 965 թուին կաթուղիկոս ընտրուեց, Սա եկեղեցու մէջ մի քանի յունական ներմուծութիւններ արեց, որով գրգռեց իւր դէմ իւր ժողովրդին. Աշոտ Գ. 970 թ. գումարեց Անւոյ Գ. ժողովը. Վահանը համոզուած լինելով որ չի կարող արդարեանալ ժողովի առաջ՝ փախաւ Վասպուրական տեղւոյն Ապուսահլ թագաւորի պաշտպանութեանը ապաւինելով: Անւոյ ժողովը կաթուղիկոս ընտրեց Սեանի վանահայր Սահփաննոս Գ.-ին: Ստեփաննոս բանադրեց Վահանին իւր հետեւողներով, իսկ Վահանը՝ Ստեփաննոսին: Այսպէս՝ Սիմէօնի ստածի նման «լցաւ աշխարհս նզովիւք»: Ստեփաննոսը բազմաթիւ հոգեւորականներով զնաց Վասպուրական Վահանին սանձհարելու, սակայն Ապուսահլ թագաւորից Կոտորոց բերդում բանաարկուեց և երկամեայ իշխանութիւնից յետոյ վախճանուեց:

14. ա. Համազասպ եպիսկոպոսը Հաւուց Թառ վանքի և Սրեանի առաջնորդն էր: Առաքել պատմագիրը (Էջմ. 1884. եր. 227—28) ասում է. «էր սա այր խրոխտ և ճարտարաբան, որ մեծաբանութեամբ պակուցանէր զկողմն Մեղքիսեդեկեանց և թէ ածէր ի վերայ նոցա»:

Մեղքիսէթ կաթուղիկոսը մի մուրհակ կեղծեց, որպէս թէ Մովսէս Խոտանանցին (յետոյ կաթուղիկոս) պարտ է իրան մի հարիւր թուման, և մուրհակը ներկայացրեց Սրեանի Ամիրգունայ խանին: Քանը և բոլորը հաւատացած էին որ մուրհակը կեղծ է. ուստի և դատաստանը երկու ամիս ձգձգուեց՝ որ եթէ հնար է ազատուի Մովսէսը:

Մի անգամ էլ խանի ատեանում բոլորի ներկայութեամբ Մեղքիսէթի եղբորորդի Սահակ կաթուղիկոսը Համազասպ եպիսկոպոսից վրէժ առնելու համար կանգնեց ու ասաց. «Թուղթդ այդ բոլորովին սուտ է. զի ոչ իմ հօրեղբայրն գիտէ և ոչ ես. այլ ես գիտեմ, որ Համազասպ եպիսկոպոսն է արարեալ զայդ նինգութիւնն: Ինչ կոսակած որ այս վկայութիւնից յետոյ Մովսէսը ազատուեց, և ամբաստանութիւնը ծանրացաւ Համազասպ եպիսկոպոսի վերայ»:

բ. Ճանճի կամ ըստ Զաքարիա սարկաւապի Ճանին (հատ. Գ. եր. 32—34).—Փիլիպպոս կաթուղիկոսը Սրեանի խանի ցանկութեամբ պարտաւորուեց ջրօրհնեաց հանդէսը Սրեանում կատարել հանդիսաւոր կերպով՝ գետի վերայ, Սրբ եկեղեցական թափօրը դուրս եկաւ դէպի գետը, թաթարներն էլ մի ուրացած եպիսկոպոս, որին Ճանին էին կոչում, հանդիսապետ կարգեցին և ծաղրելով Հայոց եկեղեցական թափօրը դուրս եկան եղօղանջելով, և բարբանջելով, դահուլով, գուռնայով և չրմչուելով և ծափելով և ուրացեալ Ճանինն առաջի նոցա: Յովհաննավանքի առաջնորդ Զաքարիա վարդապետը եկեղեցական թափօրը յետ դարձրեց. բռնել տուեց Ճանինն,

գետին գլորեց՝ «և հանեալ գիօշիկ իւր՝ կալեալ զգլուխ ուրացողին և բեկեօք կօշիկն հարկանէր մինչև վերաւորեալ արինաշտղադ աւար»։ Գրգռուած տաճիկները սուր են հանում, բայց խանը միջամտում է. ջրօրհնեաց հանգէսը դարձեալ կատարել է տալիս. մի մի պատուական պատմունան է տալիս Փիլիպպոս կաթողիկոսին և Զաքարիային. թաթարներից 30 հոգի է բռնում և 300 թուման տուգանք առնում. ուրացող ձաճինին էլ երեսօց ձգում է և բերդից դուրս քշում. Ժամանակի բարք։

գ. Սահակ կաթողիկոսը հարկատուհանքներ և պարտատէրների երեսօց փախաւ Տաճկաստան։ Էջմիածնի վանքը Մեղքիսէթի ձեռագրով պարտաւորուել էր տարեկան մի հարիւր թուման հարկ կամ մուղաթա վճարել, որ տարիների ընթացքում անվճար մնալով ծանրացել էր վանքի վերայ և կաթողիկոսները պարտաւորուում էին այդ մուղաթան պահանջելու համար նշանակուած բազմաթիւ պաշտօնեաների ասլըուստն ևս հոգալ, որ աւելի ևս ծանր էր քան ինքն մուղաթան։

Սահակ Գ. կաթողիկոսը երբ լսեց Մովսէսի կաթողիկոսանալը, կամեցաւ ինքն ևս Օսմանեան երկրում, անկախ Էջմիածնից, կաթողիկոսութիւն վարել։ Սօի Յովհաննէս կաթողիկոսի եղբօր որդի Պօղոս վարդապետին ուղարկեց Կ. Պօլիս, այնտեղի Զաքարիա պատրիարքի ձեռքով կաթողիկոսութեան հրովարտակ ստացաւ, և հաստատուեց Մշոյ ս. Կարապետի վանքում, ուր պէտք է վարէր իւր իշխանութիւնը։

Մովսէս Գ. թղթով և Էջմիածնի նուիրակ Փիլիպպոսը (յետոյ կաթողիկոս) անձամբ շատ աշխատեցին համոզել, որ Սահակը հրաժարուի իւր գիտաւորութիւնից, սակայն հնար չհղաւ։ Սահակ Գ. բարեգէտ առիթ համարելով եպարքոսի Տիգրանակերտում լինելը, գնաց այնտեղ իւր հրովարտակը վաւերացնել տալու, ի շահ արքունի գանձաւանին խոստանալով տարեկան մի հազար դահեկան։ Տիգրանակերտցի հայերը դիմեցին եպարքոսին՝ խնդրելով ազգը 1000 դահեկանի չը վաճառել և չվաւերացնել հրովարտակը և խոստացան իրանք վճարել այն։ Եպարքոսը, երևի, հայերի սիրտը շահելու համար, սաստիկ բարկացաւ, որ առանց իւր գիտութեան է ստացուած հրովարտակը, խիստ գանակոծել տուեց թէ Սահակ Գ.-ին և թէ նրա համախոհ Պօղոս վարդապետին, ստիպելով՝ որ ընդունեն մահմետականութիւն։ Հայք, կասկածելով, որ մի գուցէ ուրանան նրանք քրիստոնէութիւնը դիմեցին եպարքոսին ու ազատեցին նրանց։ Փիլիպպոսը իրեւ Էջմիածնի նուիրակ հետեւում էր Սահակին և ամէն տեղ արգելք էր լինում Հայրապետական իշխանութիւնը երկպառակող ու ջլատող նրա ջանքերին։

Սահակ Դ. մի քանի օր մնաց Տիգրանակերտում, փոքր ինչ ապաքինուեց և վերադառնալով Էջմիածին՝ անց էր կացնում իւր օրերը զղջմամբ ու ապաշխարութեամբ մինչև որ 1639 թուին վախճանուեց: Առաքել պատմագիրը (գլ. ԻԱ.) չատ սրտաչարժ է նկարագրում Սահակի մահը:

Սերգեկցի, Գառնեցի՝ և Զաքէոս արեղաների մասին լուրերը թիւններ պակասում են:

15. Սիմօնական ախտ կամ սիմօնականութիւն կոչում է դրամով հոգևոր շնորհ տալը կամ առնելը: Յետոյ սովորութիւն եղաւ կաշառքով ձեռնադրութիւն անելը կոչել սիմօնականութիւն, յանուն Սիմօն կախարդի: Սիմօն կախարդը՝ Սամարիայում մոգական արուեստով ապշեցրել էր ամենքին: Սա, տեսնելով՝ որ առաքելները ում վերայ ձեռք են դնում ստանում են ս. Հոգին, առաքելներին արծաթ առաջարկեց՝ որ իրան էլ ձեռնադրելու իրաւունք տան. սակայն առաքելները (Պետրոս և Յովհաննէս) մերժեցին: Պետրոսը ասաց նրան. «Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգևսն Աստուտութոյ համարեցար ընչիւք ստանալ» (Գործք առաք. Ը. 20):

16. Հայրապետական կոնդակի ճակատին, ուր հայրապետի տիտղոսներն են յիշատակում, կաթուղիկոս բառը գրւում էր կրրճատ, պատուով, ըստ այսմ. կթղկս, և պատիւը սկսւում էր առաջին կ-ից—հանգչում էր վերջին կ-ի վերայ խաչապսակ՝ գմբէթ ձևացնելով:

17. Ս. Էջմիածնի տաճարը շրջապատուած էր հին շինութիւնների բլրաձև փլուածքներով. հարկ էր մաքրել այդ փլուածքները. ուստի և Մովսէս Գ. կաթուղիկոսը, դեռ լուսարարապետ եղած՝ ժամանակ, երբ Էջմիածինը նորոգել սկսեց՝ յորդ և վարար ջուր կապեց փլուածքի մի կողմը և բազմաթիւ մշակներ սկսեցին փորել հողը և ջրին տւոր տալ. այսպէս, ջուրը հողն առած տանում էր իսկ քարը մնում. քիչ օրից յետոյ հողը ամեն կողմից վերցուեց՝ մնացած քարերն էլ շինութեան գործ դրուեցին (Առաք. պատ. 1884. եր. 232—234). Սաի՛ Սիմէօնը՝ այս դէպքն է ակնարկում: Իսկ «անչարժ եղիցի-ն» Մաշտոցի մէջ յայտնի մաղթանքն է, որով կնքւում է նոր գերեզմանի հողակոյտը:

